ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2014 թվականի N 33-Ա

«ՄՈՒՑՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին>> օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշման հավելվածի 32-րդ և 34-րդ կետերով և համաձայն <<Մուցքի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2014 թվականի մարտի 10-ի նիստի N3 արձանագրության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել <<Մուցքի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության համար անցկացված մրցույթի օրենսդրության համապատասխանությունը:

2.Կազմակերպության ընտրված տնօրեն Կարեն Սարգսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով ազատելով նրան տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

3.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Վ. ՀԱԿՈԲՅԱՆ*

2014. մարտի 13
ք. Կապան